ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՄԱՐՏԻ 2025 թվականի N 0410-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԽԱՆՋՅԱՆ, 13-ՐԴ ՓՈՂՈՑ, 8 ՇԵՆՔ, 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՍՈՒՆԻԿ ԽԱՉԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԵՎ ՆԵԿՏԱՐ ՎԱՆՅԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԱՎԵԼ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին , 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով ,որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի գյուղ Խանջյան, 13-րդ փողոց ,8 շենք, 2 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով , չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի , այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին , հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ.-ի դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Ն որոշումը , Սասունիկ Խաչիկի Առաքելյանի 20.05.2024 թվականի թիվ 3034 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սասունիկ Խաչիկի Առաքելյանին (ծնվ. 26/10/1964թ.) և Նեկտար Վանյայի Հովհաննիսյանին (ծնվ. 24/07/1972թ.) պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյան գյուղում գտնվող 04-049-0014-0008 կադաստրային ծածկագրով 1100 քմ

մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 131,0 քմ մակերեսով հողամասը անհատույց տրամադրել նրան՝ սեփականության իրավունքով,իսկ 187,0 քմ մակերեսով հողամասն օտարել ուղիղ վաճառքի միջոցով հողամասի կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 1 քմ հողամասի համար՝ 154,44 ՀՀ դրամ , ընդհանուր 28880(քսանութ հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

2. Վերականգնել Սասունիկ Խաչիկի Առաքելյանին և Նեկտար Վանյայի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի գյուղ Խանջյան, 13-րդ փողոց ,8 շենք, 2 հասցեում գտնվող 0,1342 հա (0,0111 հա ընդհանուր համատեղ սեփականություն) օրինական հողամասի վրա 1968թ. կառուցված 96,7 քմ մակերեսով բնակելի տան, 1980թ. կառուցված 18,4 քմ մակերեսով ավտոտնակի,1980թ. կառուցված 29,0 քմ մակերեսով անասնաշենքի, 1980թ. կառուցված 16,80 քմ մակերեսով ծածկի և 1990թ. կառուցված 1,64 քմ մակերեսով պարսպի նկատմամբ:

3. Սասունիկ Խաչիկի Առաքելյանին և Նեկտար Վանյայի Հովհաննիսյանին պատկանող 04-049-0014-0008 կադաստրային ծածկագրից գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ ,Արմավիր համայնք , գյուղ Խանջյան , 13-րդ փողոց,8/2 բնակելի տուն:

4. Ընդունել ի գիտություն , որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Ուժը կորցրած ճանաչել 2024 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1464-Ա որոշումը:

6. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. մարտի 20
ք. Արմավիր